
**ՊՈԼՍԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԹՈՒՐԹԻՈՅ ԱՆՐԱՊԵՏՈՒ- ԹԵԱՆ 20-30-ԱԿԱՆ
ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ (ՄԱՍՈՒԼԻ ՆԱՀԱՏՄԱՄԲ)**

**ԱՐՄԱԻԵՆԻ ՄԻՐՕՂԼՈՒ
(Թուրքիա, ք. Ստամբուլ)**

Օսմանեան կայսրութեան փլուզմամբ եւ հանրապետութեան հիմնադրմամբ թէեւ նոր դարաշրջան մը կը բացուի Քէմալական Թուրքիոյ առջեւ, ուր երկրի արդիականացման եւ յառաջացման համար կառավարութիւնը ամէն ջանք ի գործ կը դնէ, բայց եւ այնպէս փոքրամասնութեան հանդէպ վարած քաղաքականութեամբ կը հետապնդէ նախորդ վարչակարգին նպատակները: Աստիճանաբար բայց վճռական եղանակով կը տարածէ թրքացման ազդակները:

Թուրքիոյ հանրապետական վարչաձեւը, իր հաստատումէն սկսեալ յառաջադիմութիւններ կ'արձանագրէ նաեւ կրթական մարզին մէջ: «Զրի եւ պարտաւորիչ նախակրթութիւն» դրութեան շնորհիւ, կրթութիւնը կը տարածէ երկրին հեռաւոր անկիւնները: Մինչ այդ կրթական օրէնքներով եւ հրահանգներով իր միջամտութիւնը հետզհետէ աւելի կ'ընդարձակուի բոլոր ոչ իսլամ վարժարաններէն ներս, որն կը յառաջացնէ կնճռոտ կացութիւն եւ պատճառ կ'ըլլայ վարչական ու տնտեսական տագնապներու:

Նոր վարչակարգի առաջին միջամտութիւնը կ'ըլլայ փոքրամասնութեանց վարժարաններուն համար անուանել Թուրք ուսուցիչներ Թրքերէն, Թուրքիոյ Պատմութիւն եւ Աշխարհագրութիւն դասերուն համար, վճարումները ձգելով սակայն դպրոցներու վարչութեանց¹:

Նարը-Գաբուլի ազգային Խորէնեան վարժարանը, հակառակ Ուսումնական խորհուրդի թելադրութեան կը փակուի նիւթական միջոցներու չգոյութեան պատճառաւ²:

1924 Մայիս 28-ին Ուսումնական Խորհուրդի կողմէ կը պատրաստուի արդի պայմաններու համապատասխանող «Կրթական ծրագիր Ազգային Վարժարանաց», որը 1924 Յուլիս 22-ին կը վաւերացուի Ազգային Կեդրոնական վարչութեան Խառն ժողովի կողմէ: Այս ծրագրին թարգմանութիւնը, ազգային վարժարաններու տնօրէնութեանց կողմէ կը մատուցուի Պոլսոյ կրթական տնօրէնութեան, որ նոյնպէս նպատակայարմար կը գտնէ զայն:

Ազգային վարժարաններու տնօրէնութիւնները կ'ազդարարուին Կրթական տնօրէնութեան 3 Մարտ 1924 թուակիր շրջաբերականով՝ որեւէ

¹ Ժողովուրդի Ձայնը, 27.XII.1923:

² Յուսաբեր, 13.III.1924:

յարաբերություն չունենալ Ուսումնական խորհուրդի³ հետ, նկատելով որ անոր իրաւասութիւնը օրինական արժէք չունի⁴:

1924 թուականի աշնան Հայ վարժարաններու տնօրէնութիւնները հրահանգ կը ստանան Պոլսոյ կրթական տնօրէնութենէն, որ թրքերէն լեզուով աւանդէն Թուրքիոյ Պատմութիւն ու Աշխարհագրութիւն դասերը, առանց նկատի առնելու աշակերտներուն թրքերէն լեզուի ծանօթութեան աստիճանը: Կը հրահանգուի նաեւ երէք ամիսն անգամ մը տեղեկագրով իմացնել Կրթական տնօրէնութեան, թէ ի՞նչ չափով կ'աւանդուին Թրքերէն լեզուի, պատմութեան եւ աշխարհագրութեան դասերը եւ թէ աշակերտները ո՞րքան յառաջդիմութիւն ցոյց կուտան այս ճիւղերուն մէջ⁵:

Պէզճեան Մայր վարժարանը՝ որ 1790 թուականին կ'ըլլայ Պոլսահայ առաջին թաղային Հայ դպրոցը, 1894-ին յառաջ եկող երկրաշարժի պատճառաւ մեծ վնաս կը կրէ: Օրմանեան Պատրիարքի անձնական դիմումներով 1914 թ. կը ձեռնարկուի վարժարանի վերաշինութեան, բայց վրայ հասնող Ընդհանուր Պատերազմի պատճառաւ կիսատ կը մնայ ձեռնարկը: 1923-ին Պատրիարքական Տեղապահ Գէորգ Եպս. Ասլանեանի վերստին դիմումներով սոյն թուականին կրկին կը ձեռնարկուի վերաշինութեան եւ 1925 թ. հուլիս 24-ին տեղի կ'ունենայ վարժարանի հանդիսաւոր բացումը⁶:

Կրթական գործավարութիւնը, Պոլսոյ կրթական տնօրէնութեան կը հաղորդէ օտար եւ ոչ-իսլամ վարժարաններու մասին հետեւեալ հրամանը. «Վարժարանները մինչեւ դպրոցական նոր տարեշրջանի սկիզբը, կրթական գործավարութեան նորոգել պիտի տան իրենց արտօնագիրները եւ անպատճառ Թուրք պատասխանատու-տնօրէն մը պիտի կարգեն: Ասոնց ընտրութիւնը պիտի ենթարկուի կրթական գործավարութեան վաւերացման: Օտար եւ ոչ-իսլամ վարժարաններու արտօնագրի փոփոխութիւնը պարտաւորիչ է: Այն դպրոցները, որոնք արտօնագիր չունին պիտի փակուին: Իսկ տնօրէններն ու ոչ-իսլամ ուսուցիչներու վկայականները պէտք է վաւերացուած ըլլան կրթական տնօրէնութենէն, որուն համար քննութիւն պիտի անցնեն»⁷:

Բանկալթիի Միսիթարեան վարժարանը կ'ըլլայ առաջին Հայ դպրոցը, որ կը ստանայ դասաւանդութեան արտօնագիր՝ կրթական տնօրէնութենէն⁸:

Կրթական տնօրէնութիւնը կը հրահանգէ փակել Ենիգարույի Հայկանոյշեան վարժարանը, իր հակաառողջական հանգամանքին եւ թուրք ուսուցչին թոշակը չվճարելուն համար:

³ Ուսումնական խորհուրդը, ըստ Ազգային Սահմանադրութեան, Քաղաքական Ժողովի ենթաբաժիններէն մէկն է, որն առաջին անգամ կը կազմուի 1853-ին Ազգային հոգևոր եւ գերագոյն ժողովների համաձայնութեամբ եւ իրաւասու է ու պատասխանատու համայնքի կրթական հաստատութիւններու եւ ազգային կրթութեան կապուած բոլոր գործունէութեանց:

⁴ Արմ, 14.VII.1925:

⁵ Յուսաբեր, 10.XX.1924:

⁶ **Ազատման Թ.**, Հարիւրամնայ Յոբելեան Պէզճեան Մայր վարժարանի (1830-1930), Կ. Պոլիս, 1930, էջ 122:

⁷ Մոր Լուր, 17.IV.1925:

⁸ Հայաստանի կոչնակ, 3.I.1925:

1924 թուականի աշնանամուտին, կրթական եւ առողջապահական գործավարութեանց հրահանգներուն համաձայն կը փակուին «Գաղթականաց Կայաններու» մէջ որք տողոց ուսում ջամբելու համար Խնամատարութեան կողմէ բացուած դպրոցները: Խնամատարութեան նախաձեռնութեամբ, համեստ վճարումի մը փոխարէն այս տղաքը կը յաճախեն մօտակայ ազգային վարժարանները⁹:

Յաջորդող օրերուն Կրթական գործավարութիւնը կը պատրաստէ հետեւեալ հրահանգը՝ դպրոցական գիրքերու մասին.

- Ուել դասագիրքի մէջ թուրք ազգին ներկային եւ անցեալին վերաբերեալ միջադէպ մը եւ Թուրքիոյ սովորոյթին ու օրէնքներուն մասին-նոյն իսկ պզտիկ բառի մը ձեւին տակ- անարգալից եւ հեզնական լեզուով խօսուած պիտի չըլլայ: Ընդհանրապէս դասագիրքերուն մէջ Թուրքիոյ աշխարհագրութեան, պատմութեան եւ կեանքին վերաբերեալ սխալ տեղեկութիւններ պիտի չգտնուին:

- Այս գիրքերուն մէջ պիտի չգտնուի նոյնպէս մէկ հատիկ բառ, որ Թուրքիոյ հողին վրայ՝ ոչ-թուրք ազգերու յաւակնութիւններու մասին խօսի եւ անոնց ակնարկութիւն ընէ:

- Թուրքիոյ քարտէսները Լօզանի դաշնագրին որոշած հայրենիքի մասերը ճշտութեամբ պիտի ցուցնեն: Անոր մէջ որեւէ օտար ազգի ակնարկութիւն ընող բառ միսկ պիտի չգտնուի:

- Չեն կրնար կարդացուիլ այնպիսի գիրքեր, որոնք տարբեր կրօնքի պատկանող տողոց ուրիշ կրօնքի մը վերաբերեալ ներշնչումներ ընելու, զայն հրապուրիչ եւ գեղեցիկ ցուցնելու հանգամանք ունին¹⁰:

1925 Յուլիս 21 թուակիր Պոլսոյ թերթերը կը ծանուցեն Ուսումնական Խորհուրդի հրաժարականը (առաջին անգամ տեսուչ խորհուրդ մը կը հրաժարի արտաքին պատճառներու բերումով):

Մէարիֆը (կրթական տնօրէնութիւնը) կարգ մը շրջաբերականներով կը սեփականացնէ շատ մը իրաւունքներ: Ազգային վարժարաններու ներքին կեանքը տխուր երեսակներ կը պարզէ եւ հետզհետէ յուսահատական վախճանի մը կը դիմէ:

Պոլսոյ կրթական տնօրէնութիւնը Ազգային վարժարաններու Տնօրէնութեանց ուղղած վիճակագրական հարցարանով մը մանրամասն հարցումներ կուղղէ իւրաքանչիւր վարժարանի շէնքին, տարողութեան, սեփականութեան, գոյքերուն, հասոյթներուն, ծախքերուն, ուսուցիչներուն ու աշակերտութեան, նոյնիսկ ծնողքներուն հետեւած ասպարէզներուն մասին¹¹:

Կառավարութիւնը իր ուզած չափով Թուրք ուսուցիչներ կը պարտադրէ Հայ դպրոցներուն, ինք որոշելով նաեւ անոնց թոշակները. դասաժամը 150 դրուշ բարձրագոյն կարգերու եւ 75 դրուշ նախակրթարաններու համար: Այս նորատեսակ հարստահարութիւնը, որ կը ձգտի թրքացումը փութացնելու, տագնապ կը յառաջացնէ Պոլսահայ
կրթական
կեանքէն

⁹ Առաւօտ, 1.XI.1924:

¹⁰ Յառաջ, 16.VII.1926:

¹¹ Արմ, 1.X.1925:

ներս: Իսկ Թրքերենի պահերը կը բարձրացնէ շաբաթական 4-էն 6 պահի¹³:

Դպրոցները կենթարկուին ճնշումի: Ամէնէն չքաւոր դպրոցը ամսական 80-90 ոսկի կը վճարէ թուրք ուսուցիչին, մինչ այդ տնօրէնները հազիւ 50-60 ոսկի թոշակ կ'ունենան, իսկ ուսուցիչները՝ 30-40 ոսկի: Կաւելցուին թուրքերենի դասաժամերը: Փոքր մանուկներն անգամ, որոնք հազիւ իրենց մայրենի լեզուն թոթովել գիտեն, օրական երկու ժամ թրքերենի դաս կ'առնեն՝ դասաւանդութեամբ Մէարիֆի նշանակած ուսուցիչին: Քննութեան կենթարկուին տնօրէններն թրքերէնով, որոնցմէ ձախողածներուն տեղ կը ծրագրուի տեղաւորել թուրք ուսուցիչներ: Բարեբախտաբար գրեթէ բոլոր ազգային վարժարանաց տնօրէնները կը յաջողին: Կարգիլուի Ուսումնական եւ Թաղային խորհուրդի անդամներուն մուտքը իրենց վարած դպրոցներէն ներս¹⁴:

Դիւանական բոլոր գործերուն համար պարտաւորիչ կը դառնայ թրքերէնը: Կը հրահանգուի նաեւ աշակերտաց մականուններու թրքացում¹⁵: Նոյնպէս շրջաբերականով մը կ'ուղղուի հետեւեալ հրահանգը. «Այն աշակերտները, որոնք թրքերէն, թուրք աշխարհագրութեան եւ պատմութեան քննութեանց մէջ յաջողութիւն չեն արձանագրած, չեն կրնար կարգ փոխել, եթէ նոյնիսկ յաջող ըլլան միւս բոլոր ճիւղերուն մէջ»¹⁶:

Ուսումնական Խորհուրդը 1926 թուականին կը վերակազմէ «Կարօտ Ուսուցչաց Օգնութեան Սնտուկի Հոգաբարձութիւն»-ը, որ 1921 թուականէն ի վեր գոյութիւն չունէր¹⁶:

Կրթական տնօրէնութեան կողմէ փակուած- շէնքի հակաառողջական հանգամանքի եւ ուսուցիչի թոշակի պատճառաւ- Ենիգաբու Հայկանոյշեան վարժարանի թաղականները եկեղեցապատկան տուն մը նորոգելով վարժարանի կը վերածեն զայն ու վերաբացման արտօնութիւն կը ստանան կրթական տնօրէնութենէն: Այսպէս՝ 1 Մարտ 1927 թուականին 44 աշակերտներով կը վերսկսին դասաւանդութիւնները, ունենալով միայն մանկապարտէզ եւ առաջին երկու դասարանները¹⁷:

Այս ազգային վարժարաններուն մէջ ուսում կը ստանան 4480 աշակերտներ: Այս ազգային վարժարաններէն 5-ը (Բ. Հիսար, Կէտիկ Փաշա, Գումգաբու, Առնաւուտգիւղ եւ Թօփգաբու) կը մատակարարուին առանց թաղային սնտուկի օժանդակութեան: Նոյնպէս 2 որբանոցներ կը մատակարարուին իրենց հասոյթներով եւ նուիրատուութիւններով:

Ազգային կրթարաններու մէջ կը պաշտօնավարեն 240 ուսուցիչ եւ ուսուցչուհիներ: Ասոնց 60-ը Թուրք ուսուցիչներ են, 43-ը մանկապարտիզպանուհիներ: Այր ուսուցիչներուն թիւը կ'ըլլայ 65:

Այս կրթարաններու ամսական ընդհանուր պիւտճէն կ'ըլլայ 12.451 ոսկի, որուն 2181 ոսկին կը տրուի Թուրք ուսուցիչներուն, որոնք կը կարգուին պետութեան կողմէ:

¹³ Յառաջ, 18.X.1925:

¹⁴ Նոյն տնդէն, 1.IX.1925:

¹⁵ Նոյն տնդէն, 22.XI.1925:

¹⁶ Նոյն տնդէն, 10.II.1927:

¹⁷ Արմ, 17.II.1926:

¹⁸ Ազդարար, 18.II.1927:

Բացի այս ազգային վարժարաններէն, Պոլիս կունենայ նաեւ 7 անհատական վարժարաններ՝ Պէզազեան Լիսէ, Նոր Դպրոց, Պերպերեան, Թորոսեան (մանկապարտէզ-նախակրթարան), Սուլթանեան (Տիպար կրթարան), Մումճեան (մանկապարտէզ-նախակրթարան-բարձրագոյն ուսումնարան) եւ Բագրատունի (մանկապարտէզ-նախակրթարան-ուսումնարան ի Բանկալթի), ուր կ'ուսանին շուրջ 750-800 երկսեռ աշակերտներ: Գրեթէ նոյնքան թիւով աշակերտութիւն կը յաճախեն օտար վարժարաններ (Բոպէրտ Գօլէճ, Սկիւտարի եւ Կէօզէփէյի ամերիկեան հաստատութիւնները, Ֆրանսական, Իտալական, Անգլիական վարժարաններ) եւ Վիեննական, Վենետիկեան, Աղքատասէր Տիկնանց, որով Պոլսոյ Հայ աշակերտութեան թիւը կը հասնի 6000-ի, մէջն ըլլալով պետական վարժարաններ յաճախող սակաւաթիւ աշակերտներ: Թաղային վարժարաններու մէջ ցրուած կ'ըլլան 300-ի մօտ գաղթական տղաներ, որոնց ուսման եւ սնունդի ծախքերը կը հոգայ խնամատարութիւնը¹⁸:

Կրթական Տնօրէնութեան կողմէ ուղարկուած յաջորդ որոշումը կ'ըլլայ հետեւեալը. «Ոչ-իսլամ վարժարաններու կնիքներուն եւ պաշտօնական բոլոր թուղթերուն վրայ միայն թրքերէն պիտի գրուի առանց ուրիշ որեւէ լեզուով բան աւելցնելու: Վկայականներն ալ պիտի ըլլան միայն թրքերէն»¹⁹: Պոլսոյ Կրթական Տնօրէնութիւնը 17 Հոկտեմբեր 1926 թ. 591 համար շրջաբերականով ոչ-իսլամ վարժարաններու տնօրէնութեանց կը հաղորդէ Կրթական գործավարութեան հետեւեալ հրահանգը. «Փոքրամասնութեանց դպրոցներուն մէջ, պատմութեան, աշխարհագրութեան եւ քաղաքացիական կրթութեան դասերը պիտի աւանդուին թուրքերէն լեզուով, թուրք ուսուցիչներու կողմէ եւ համաձայն պաշտօնական նախակրթարաններու ծրագրին»²⁰:

Կրթական գործավարութիւնը 2 ժամ եւս կ'աւելցնէ թուրքերէնի դասաժամերը օտար եւ փոքրամասնութեանց դպրոցներուն մէջ՝ «հրապարակային արտասանութիւն եւ խօսակցութիւն» անունով, որպէսզի աշակերտները աւելի ընդարձակ կերպով տիրանան թուրք լեզուին եւ լաւ արտասանեն գայն²¹:

1927 Յուլիս 2 թուակիր «Հայաստանի Կոչնակէն» կը տեղեկանանք, թէ Պերպերեան վարժարանը կը փակուի Կրթական Տնօրէնութեան կողմէ: Թրքական «Ճումհուրիյէթ» օրաթերթը, իբրեւ փակման պատճառ կը յիշէ թէ Թուրք ուսուցիչներու ամսականները չեն վճարուած եւ նաեւ գաղտնի դասարաններ կ'ազմուած են:

Կրթական Գործավարութեան արտօնութեամբ 1927-1928 տարեշրջանին, Կէտիկփաշա Միս Պըրճըսի շէնքին մէջ կը վերաբացուի «Հայ Աւետարանական Ազգային Վարժարան»-ը, որուն հիմնադիրն է Վերապատուելի Ս. Պ. Մանուկեան: Վարժարանը կ'ունենայ միայն նախակրթարանի բաժին, ուր երկսեռ աշակերտութեան թիւը կ'ըլլայ 100²²:

¹⁸ Հայաստանի Կոչնակ, 21.V.1927:

¹⁹ Յառաջ, 2.III.1927:

²⁰ Ազդարար, 8.XI.1927:

²¹ Նոյն տողէն, 1.I.1927 - Ազգամ թուրքական թերթէն արտատպած:

²² Ընդարձակ Տարեցոյց 1928, Կ. Պոլիս, 1928, էջ 365:

Կեդրոնական-Սանասարեան վարժարանը կրթական գործավարության կողմէ կը հաստատուի իբրեւ «լիսէ», որն մինչ այդ ընդունուած էր իբրեւ երկրորդական վարժարան: Այս կարգադրութեամբ Կեդրոնականի ընթացաւարտները առանց քննութեան կը կարողանան ընդունուիլ պետական համալսարան կամ մասնագիտական վարժարան²³:

Բանկալթի Մխիթարեան վարժարանն ալ, կրթական գործավարութեան բարձրագոյն ժողովին 4 Նոյեմբեր 1928 թուականի նիստի որոշմամբ, կը ստանայ լիսէի վերածուելու արտօնութիւնը եւ Դեկտեմբեր 1928-էն սկսեալ ընդունուած կըլլայ որպէս լիսէ²⁴:

Կրթական գործավարութիւնը կատարած հիմնական քննութիւններէն վերջ կորոշէ.

- Փոքրամասնութեան վարժարաններու մէջ մայրենի լեզուն պիտի դասաւանդուի միայն իբրեւ լեզու, իսկ միւս բոլոր դասերը պիտի դասաւանդուին թրքերէն լեզուով:

- 5-ի պիտի զեղջուին նախակրթարաններու կարգերը, որոնք 6 են:

- Օրական 5 պահ դաս պիտի տրուի, ինչպէս են թուրք դպրոցները²⁵:

Կրթական գործավարութիւնը կը սկսի կրթական տուրքէն բաժին յատկացնել նաեւ փոքրամասնութեանց այն վարժարաններուն, որոնք պիտոճէյի բաց ունին²⁶: Պոլսահայ թերթերը կարձագանքեն՝ Բերայի հարկահաւաք ճիւղի կողմէ Էսաեան վարժարանէն պահանջուած 500 ոսկի շահատուրքի մասին, նշելով որ մասնաւոր հաստատութիւն է²⁷: Ասոնցմէ զատ գոյութիւն կունենայ չորս անհատական վարժարաններ՝ Պեգազեան Լիսէ, Նոր Դպրոց, Տիպար Կրթարան եւ Արդի Կրթարան (Բանկալթը):

1929-1930 թուականներուն Հայ Կաթողիկէ համայնքը Պոլսոյ մէջ կունենայ հետեւեալ վարժարանները.

- Բանկալթիի Վիեննական Մխիթարեան Լիսէն (կունենայ նաեւ գիշերօթիկ սաներ) 269 աշակերտներով, որոնցմէ 197-ը կը յաճախեն նախակրթարան, իսկ 72-ը՝ լիսէ:

- Սագրզաղաճի Վենետիկեան Մխիթարեան վարժարանը, որ 4 կարգերով նախակրթարան մը ըլլալով կունենայ 64 աշակերտներ:

- Անարատ Յղութիւն Քոյրերու վարժարաններ՝ ուր ուսում կը ստանան 455 աշակերտներ.

ա.- Մայր վարժարան (Սագրզաղաճ)

բ.- Աղջկանց վարժարան (Բանկալթի)

գ.- Աղջկանց վարժարան (Գատըզիւղ)

դ.- Ս. Աննա Որբանոց (Սագրզաղաճ)

ե.- Ս. Աննա Որբանոց (Սամաթիա)

²³ Մշակ, 13.X.1928:

²⁴ Հայաստանի Լոյնակ, 14.VII.1929:

²⁵ Յառաջ, 4.VI.1929 - արտատպուած Ազգամ թուրք թերթէն:

²⁶ Արև, 4.II.1929:

²⁷ Նոյն տողէն, 29.III.1929:

Իսկ Հայ Բողոքական համայնքի միակ վարժարանը կըլլայ Կէտիկ Փաշա Ինձիրտիպիյի «Հայ Բողոքական Երկսեռ Վարժարանը», որուն աշակերտութեան թիւը կըլլայ 236:

Պոլսոյ կրթական տնօրէնութիւնը կ'արգիլէ աղօթել դպրոցներուն մէջ: Կը հրահանգուի նաեւ մարզանքի դասաժամերուն հրամանները տալ թրքերէնով²⁸: Պոլսոյ կառավարական հարկահաւաք մասնաճիւղերը հայկական վարժարաններուն կը յանձնարարեն իրենց ներկայացնել մէկ ցանկը վարժարանին եղած նուիրատութեանց, ինչպէս նաեւ դպրոցապատկան շէնքերուն²⁹:

30ական թուականներուն Պոլսահայ վարժարաններու հիմնական խնդիրներէն կըլլան նաեւ հետեւեալները.

- Թաղականի եւ տնօրէնի միջեւ իրարահասկացողութեան եւ բարոյական գետնի վրայ փոխադարձ վստահութեան պակասը.

- Անվարչագիտութեան, ձեռնհասութեան պակասի, յոռի մատակարարութեան եւ կառավարական պատճառներով յառաջացած եւ քրոնիկ վիճակ ստացած նիւթական տագնապը³⁰:

1930 Յուլիսին Քաղաքական ժողովի Տնտեսական խորհուրդը՝ անհրաժեշտ տեսնելով վարժարաններու միացման ծրագիրը կ'որոշէ, որ Օրթագիդի եւ Առնաուտգիդի նախակրթարանները չպահեն իրենց բարձրագոյն երկու դասարանները ու այս դասարաններու աշակերտները դրկեն Պէշիքթաշ, որ կը պահէ ամբողջական կարգեր³¹:

Կրթական գործավարութեան կողմէ հաղորդուած շրջաբերականի մը տրամադրութեան համաձայն, 1931-1932 տարեշրջանէն սկսեալ փոքրամասնութեան լիսէի շրջանաւարտներու համալսարան ընդունման համար ի գօրու կըլլայ՝ կամ պետական լիսէի քննութեանց մասնակցելով յաջողութիւն արձանագրել եւ կամ իբր առժամեայ աշակերտ արձանագրուիլ համալսարան, տարի մը հոն պատրաստուիլ եւ անցնել «պաքալորիայի» քննութիւն եւ յաջողիլ³²:

Գնալը կղզին՝ նաւամատոյցին մօտակայ շուկային մէջ 1932 Փետրուարին կը ծագի հրդեհ մը եւ կ'այրի Հայոց վարժարանը, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ կալուածներէն՝ Թատրոնը³³: Ազգային բարերար Տիգրան Գազազեան ազգին կը նուիրէ շէնք մը, որպէս զի օգտագործուի իբրեւ վարժարան: Այսպէս 30 Սեպտեմբեր 1932 Ուրբաթ՝ վերաբացումը կը կատարուի Գնալը Ներսէսեան վարժարանին, որն նախախնամական դեր մը կը կատարէ կղզիցի տղոց համար³⁴: Իսկ մինչեւ այդ թուականը դասախօսութիւնները՝ կրթական տնօրէնութեան արտօնութեամբ կը շարունակուին Թաղային խորհրդարանին մէջ³⁵:

Էսաեան վարժարանը 1932 թուականի Յունիսին կը սկսի ազգին պարգեւել լիսէի

²⁸ Հայաստանի Կոչնակ, 8.III.1930:

²⁹ Նոյն տնդէն, 8.III.1930:

³⁰ Արեւիկ, 6.IX.1932:

³¹ Ազդարար, 16.VIII.1930:

³² Արեւիկ, 12.XI.1931:

³³ Հ. Կոչնակ, 9.IV.1932:

³⁴ Արեւիկ, 1.X.1932:

³⁵ Նոյն տնդէն, 27.II.1932:

աղջիկ պսակաւորներ, որոնք մեծ դեր կը կատարեն հայ իգական սեռին բարձրացման եւ ապագայ սերունդին առողջ դաստիարակութեան գործին մէջ³⁶:

Կրթական տնօրէնութիւնը 06 Մայիս 1933 թուակիր եւ 3961/51 թիւ շրջաբերականով կը ճշտէ ամսվերջի քննութեան օրերը, քննութեանց ցուցակներու պատրաստութեան կերպը, քննութեանց համար գալիք քննիչներու մասին կատարուելիք կարգադրութիւններն ու կը յայտնէ հանդէսի կամ մրցանակաբաշխութեան համար նախապէս արտօնութիւն առնելու անհրաժեշտութիւնը³⁷:

1934 թուականին Պոլսոյ Հայ համայնքը կունենայ 31 նախակրթարաններ եւ 5 լիսէներ, որոնցմէ առաջիններուն ուսանողաց ընդհանուր թիւը 4521 եւ վերջիններունը՝ 1895 է³⁸:

Կրթական տնօրէնութիւնը խիստ քննութեան կենթարկէ հայերէն լեզուով գրուած բոլոր դասագիրքերը եւ չարտօնէր գործածութիւնը այն գիրքերուն, որոնք չեն վաւերացուած կրթական նախարարութեան կողմէ: Կարգիլէ նաեւ վերոյիշեալ գիրքերու Ուսումնական խորհուրդի կողմէ վաւերացումը շեշտելով՝ անոր իրաւասութեան տնօրէնութիւնը: Այս նպատակաւ 5 Յունիս 1934 թուական եւ 5059/2223 թիւ շրջաբերականը կուղարկէ Գարակէօզեան Ազգային Որբանոցի տնօրէնութեան, ուր կը հրամայէ ջնջել սոյն գիրքերու կազմ ու տիտղոսաթերթերէն «վաւերացուած՝ Պատրիարքարանի Ուսումնական խորհուրդի կողմէ» նախադասութիւնը³⁹: Այս շրջաբերականէն 2 տարի վերջ, երբ դեռ գործածութեան մէջ կը գտնուին Ուսումնական խորհուրդի կողմէ վաւերացուած դասագրքերը, կրթական տնօրէնութիւնը 25 Սեպտեմբեր 1936 թուական եւ 67160/2780 թիւ գրութեամբ՝ «Յատուկ դպրոցներու կանոնադրութեան» 39-րդ յօդուածին համաձայն կը դատապարտէ Գարակէօզեանի տնօրէնութիւնը եւ կը նախագրուեցնէ, որ հրահանգին չենթարկուելու պարագային, պիտի ենթարկուի աւելի ծանր պատժի⁴⁰:

1934 Սեպտեմբերին կրթական գործավարութիւնը շրջաբերականով մը վերջ կուտայ օտար եւ փոքրամասնութեանց վարժարաններու (լիսէներու) վկայական տալու իրաւունքին: Այս վարժարաններն յաճախած, շրջանաւարտ ըլլալու թեկնածու ուսանողներ, վկայական ստանալու համար իրենց վարժարանին մէջ տեղի ունեցած ընթացաւարտ կարգի քննութիւններէն վերջ կը պարտաւորուին նաեւ մասնակցիլ ու յաջողիլ պաշտօնական «պաքալորիայի» քննութեանց, որմէ վերջ միայն կրթական գործավարութեան կողմէ վկայական կը տրուի իրենց⁴¹:

Սկիւտարի Ս. Խաչ Եկեղեցւոյ թաղային խորհուրդը 1930-ականներու սկիզբը, նիւթական դժուարութեան մատնուելով նախ մանկապարտէզի կը վերածէ Ս. Խաչ վարժարանը՝ որ պատմական համբաւ ունի, ապա բոլորովին կը փակէ զայն: Իսկ Ճեմարան վարժարանը, որ Պոլսոյ անդրանիկ կանոնաւոր արդիական կրթարանը կը

³⁶ Նոյն տնդէն, 3.VII.1932:

³⁷ Օրագրութիւն՝ Գարակէօզեան Ազգային Որբանոցի Խնամակալութեան (1.04.1933-31.01.1936), Լ. Պոլիս, 1933, էջ 13:

³⁸ Ժամանակ, 24.VIII.1934:

³⁹ Գարակէօզեան Ազգային Որբանոցի արխիւ:

⁴⁰ Նոյն տնդէն:

⁴¹ Արեւիկ, 28.XII.1934:

հանդիսանայ, անելի մատնումը՝ կունենայ միայն մեկ դպրոց, մեկ մանկապարտեզ, Ս. Խաչ վարժարանի շենքին մեջ⁴²:

Կրթական գործավարությունը 8 Փետրուար 1934 թուականի եւ 2004 համար հրահանգով կը ջնջէ Էսաեան վարժարանի անգլերէնի դասերը, ի պատասխան Բերայի թաղականութեան կողմէ խնայողութեան նկատառումով «Կրթական Գործավարութեան Ուսումի եւ Դաստիարակութեան Յանձնաժողով»-ին կատարուած դիմումին⁴³:

1934-ին Կեդրոնական վարժարանն ալ մեծապէս կը ցնցուի, կորսնցնելով իր նիւթական աղբիւրներուն մեծագոյն մասը, ինչպէս նաեւ ազգընտիր խնամակալութեան մը ներկայութիւնը:

Թուրքիոյ Հանրապետութեան Ելմտական նախարարութեան մասնաճիւղերը, 1934 թուականի «Շահատուրքի Նոր Օրէնք»-ին համաձայն, իբր մասնաւոր վարժարաններ՝ ընդունած չըլլալով պետական ծրագիրը – հետեւաբար շահատուրքի ենթակայ – տուրք կը պահանջեն ազգային վարժարաններէ: Տնօրէններ, գրաւոր կերպով կը բացատրեն իրենց պատկան ելմտական մասնաճիւղերուն, թէ ըլլալով համայնքային դպրոցներ՝ ոչ թէ շահու, այլ օրէնքին պարտադրած նախակրթութիւնը համայնքի տղոց տալու համար բացուած են⁴⁴:

Կրթական գործավարութիւնը, կը հաղորդէ ելեւմտականին՝ «փոքրամասնութեան դպրոցները կը նպաստեն հանրային կրթութեան, հետեւաբար, ըստ օրինի, գերծ են կալուածական տուրքէ»⁴⁵: Ելմտական գործավարութիւնը, երկար քննութիւններ կատարելէ վերջ, 1935-ին որոշում կը կայացնէ, թէ փոքրամասնութեանց վարժարանները, չըլլալով առեւտրական հաստատութիւններ եւ ընդունուած ըլլալով իբր բարեգործական հաստատութիւններ՝ գերծ կը մնան շահատուրք վճարելէ⁴⁶:

Ազգային վարժարանները շատ լուրջ տագնապ մը կ'անցնեն: Ուսուցիչներ չորս-հինգ ամիս թոշակ չեն կրնար ստանալ եւ քանի որ վերջին տարիներու ընթացքին կարելի ամէն խնայողութիւն կատարուած կ'ըլլայ, 1935-ին այլեւս կը սկսի մկրատը դպչիլ ոսկորին: Ուսուցիչներ կ'արձակուին զանգուածօրէն՝ հակառակ որ ուսուցչի սով կը տիրէ հրապարակին վրայ: Վարչութիւնը Էսաեանի լիսէի կարգերը կը միացնէ Կեդրոնականին⁴⁷: Այսպէս Կեդրոնական կ'ըլլայ երկսեռ լիսէ, որ կը շարունակուի մինչեւ 1953-1954 տարեշրջանը⁴⁸:

Բացարձակապէս անհրաժեշտ նկատելով Ազգային Խնամատարական Որբանոցի ու Գարակէօզեան Ազգային Որբանոցի մատակարարական եւ վարչային միացումը, Վարչային ժողովը խորհրդակցութեան կը հրաւիրէ երկու հաստատութեան ղեկավարները⁴⁹: Բայց այդ շրջանին ապարդիւն կը մնան սոյն ջանքերը:

⁴² Նոր Լոյս, 2.VIII.1934:

⁴³ Ազդարար, 15.II.1934:

⁴⁴ Նոյն տնդէն, 16.IV.1934:

⁴⁵ Ճումիւրիէթ, 2.VIII.1938:

⁴⁶ Ազդարար, 27.III.1935:

⁴⁷ Նոյն տնդէն, 3.VII.1935:

⁴⁸ Կոմիկեան Վ., Կեդրոնականը Հանրապետութեան Ծրջանին, Ծողակաթ, 1971-1972, Իսթանպուլ, 1973, էջ 28:

⁴⁹ Ազդարար, 25.V.1935:

Վարչությունը կը ծրագրէ նաեւ միացնել Սկիւտարի վարժարանները: Բայց՝ հակառակ որ երկար տարիներ օրակարգը կը զբաղեցնէ որպէս «Ներսէս Երմոնեան եւ Ճեմարան վարժարաններու միացման հարց», կարելի չըլլար արդիւնք մը յառաջացնել:

Կրթական տնօրէնութեան հրահանգով եւ կրթական քննիչ Մէհմէդ Ալի Պէյի նախագահութեամբ Հայ դպրոցներու տնօրէններէ բաղկացած յանձնաժողովը կը պատրաստէ՝ Հայ նախակրթարաններու ուսումնական եւ կարգապահման միօրինակութիւնը ապահովող «միօրինակ կանոնագիր եւ ուսման ծրագիր» մը: Այս ծրագրով կը ճշդուին դպրոցներու արձակուրդի օրերը, իւրաքանչիւր դասարանի կրթական մակարդակը եւլն⁵⁰: Նոր կանոնագրի եւ ուսման ծրագրի ամբողջական գործադրութիւնը կը սկսի 1937-1938 տարեշրջանին⁵¹: Կրթական տնօրէնութեան ղեկավարութեամբ պատրաստուած այս «հասարակաց կանոնագիր»-ին համաձայն վարժարաններու մէջ կը դասաւանդուին միայն թրքերէն եւ մշակութային դասերը (Թուրքիոյ պատմութիւն, աշխարհագրութիւն եւ քաղաքացիական կրթութիւն)⁵²:

Կրթական գործավարութեան որոշմամբ, լիսէներու եւ միջնակարգ վարժարաններու ուսուցիչները իրաւունք կ'ունենան առաւելագոյն 24 ժամ դասաւանդել եւ նաեւ առաւելագոյն երկու դպրոցի կրնան յատկացնել այս դասաժամերը⁵³:

Էվգաֆը⁵⁴ Թաղային խորհուրդներէ կը պահանջէ Պոլսոյ վարժարաններու պիւտճէն, անոնցմէ գանձելու համար 5% բաժին⁵⁵: Իսկ Կրթական տնօրէնութիւնը շրջաբերականով մը կը հաղորդէ բոլոր վարժարաններու տնօրէններուն եւ հիմնադիրներուն հրաման մը՝ որով կը պահանջէ Թաղային խորհուրդներու կողմէ Էվգաֆի տրուած պիւտճէին յար եւ նման պիւտճէ մը ներկայացնել իրեն յառաջիկայ 1938-1939 տարեշրջանին համար, մանրամասնօրէն ցոյց տալով թոշակներէ, նուիրատուութիւններէ եւ թաղային խորհուրդի յատկացումներէ գոյացած գումարները, նաեւ մանրամասն մէկ ցուցակը՝ ծախքերուն եւ հասոյթներուն⁵⁶:

Կրթական տնօրէնութեան հրահանգով 1936-1937 տարեշրջանին փոքրամասնութեանց Լիսէներու թուրք ուսուցիչներէն մէկը կ'ընտրուի իբրեւ «փոխ տնօրէն», որպէսզի օգնէ տնօրէնին՝ կրթական տնօրէնութեան հետ պաշտօնական յարաբերութիւններուն եւ թղթակցութեանց մէջ⁵⁷: Իսկ յաջորդ տարեշրջանին Կրթական տնօրէնութեան կողմէ նախակրթարաններու համար «փոխ-տնօրէն» կը նշանակուի սոյն վարժարանի թուրք մշակոյթի կամ թրքերէն լեզուի ուսուցիչներէն մէկը: Կը հրահան-

⁵⁰ Ժամանակ, 4.VIII.1936:

⁵¹ **Ճինդլեան Յ.**, Տարեցոյց Ս. Փրկիչ, Ազգ. Հիւանդանոցի 1938, Կ. Պոլիս, 1938, էջ 127:

⁵² Հ. Կոչնակ, 25.XII.1937:

⁵³ Ժամանակ, 28.VIII.1936:

⁵⁴ Էվգաֆ - վագրֆներու տնօրէնութիւն: Վագրֆ կը նշանակէ սեփականութիւն, որ սեփականատիրոջ կողմէ տրուել է կրօնական կամ բարեգործական կարիքներու համար համայնքին, պետութեան կամ մասնատու անձին:

⁵⁵ Հ. Կոչնակ, 21.VIII.1937:

⁵⁶ Արեւելք, 19.III.1938:

⁵⁷ Հ. Կոչնակ, 22.V.1937:

գուի նաեւ ունենալ տոնոց յատուկ, թրքերէն գիրքերով պատրաստուած մատենադարան մը եւ հանդիսութիւնները կատարուին կամ թրքերէն լեզուով եւ կամ հանդէսի նիւթերը թրքերէնի թարգմանել ու ներկայացնել կրթական տնօրէնութեան, հանդէսէն ամիս մը առաջ՝ արտօնութիւն ստանալու համար:

1937-1938 տարեշրջանին Պոլսոյ Հայ համայնքը կ'ունենայ 37 կրթական հաստատութիւններ՝ (ազգային եւ անհատական) որոնց 2 հատը միայն մանկապարտեզի. մէկը միայն միջնակարգ, իսկ 3 հատը միջնակարգ եւ լիսէի բաժիններ կ'ունենան: Սոյն տարեշրջանին Պոլսոյ Հայ համայնքը կ'ունենայ 177 ուսուցչուհիներ եւ 110 ուսուցիչներ⁵⁸:

1938-ին վերջ կը տրուի փոքրամասնութեանց ազգային վարժարաններու շէնքերէն քակուածական տուրք՝ գանձելու դրութեան՝ այն խորհրդածութեամբ, թէ ասոնք ալ պետական վարժարաններու նման, հանրային կրթութեան ծառայող հաստատութիւններ են: Իսկ կը շարունակուի տուրք գանձուիլ՝ փոքրամասնութեանց անհատներուն կողմէ բացուած անձնական վարժարաններէն, խորհրդածելով թէ թէեւ ասոնք ալ հանրային կրթութեան կը ծառայեն, բայց միաժամանակ շահ ալ կը հետապնդեն⁵⁹:

Կրթական գործավարութիւնը հիմնական քննութենէ կ'անցնէ Պոլսոյ օտար եւ փոքրամասնութեանց վարժարանները՝ ղրկելով երկու ընդհանուր քննիչներ, որոնք իւրաքանչիւր դպրոց քանի մը շաբաթ մնալով մանրամասն քննութիւններ կը կատարեն, յատկապէս կեդրոնանալով արձանագրութիւններու եւ բոլոր թղթածրարներու վրայ:

Այս քննութիւններէն վերջ, Կրթական գործավարութիւնը տնօրէնութիւններուն կը տեղեկացնէ, թէ ուսուցիչներ պաշտօնի կոչելու եւ անոնց պաշտօններուն վերջ տալու որոշումը միայն կրնայ տալ կրթական գործավարութիւնը⁶⁰:

1938-ին կրկին օրակարգի նիւթ կ'ըլլայ Խնամատարական Որբանոցի եւ Գարակէօզեան Ազգային Որբանոցի միացման հարցը: Երկարատեւ բանակցութիւններէ եւ խորհրդածութիւններէ վերջ, կ'իրականանայ երկու որբանոցներու միացումը: Կը հրաժարին Գարակէօզեանի եւ Խնամատար որբանոցի խնամակալութիւնները, կ'ընտրուի Գարակէօզեան- Խնամատարական միացեալ որբանոցի նոր խնամակալութիւն, ատենապետութեամբ՝ Գ. Թորգոմեանի: Կը պատրաստուի միացեալ որբանոցի ներքին կանոնագիրը, որ կը սկսի գործադրուիլ 1938-1939 տարեշրջանին: Սկիւտարի խնամատարական որբանոցի 40 մանչ որբերը 18 հոկտեմբեր 1938 թուականին կը փոխադրուին Շիշլի Գարակէօզեան որբանոցի շէնքը, ուր կը միանան Գարակէօզեանի 40 որբերուն: Իսկ Սկիւտարի 13 աղջիկ որբերը կը ղրկուին Խասգիւղի Գալֆաեան աղջկանց որբանոցը⁶¹: Ռումելի Հիսարի Թաղէոսեան ու Գնալը կղզիի Ներսէսեան վարժարանները կը փակուին 1938 թուականին⁶²: Հետեւելով վերոյիշեալ փաստերուն

կարելի

⁵⁸ Արմաղան, Թ. Հանրապետութեան 15 ամեակին առթիւ, Իսթանպուլ, 1938, էջ 32:

⁵⁹ Արևելք, 3.VIII.1938:

⁶⁰ Նոյն տողէն, 9.I.1938:

⁶¹ Նոյն տողէն, 18.X.1938:

⁶² Նոյն տողէն, 19.X.1938:

է պատկերացնել, թէ Պոլսահայ կրթական կենտրոնը Հանրապետութեան 20-30-ական թուականներուն կապրի հետգիտէտ ծանրացող հոգեվարքի վիճակ մը զանազան գործօններու ազդեցութեամբ:

Հանրապետութեան 20-30-ական թուականներուն Պոլսահայ կրթական հաստատութիւնները՝ որոնց ընդհանուր աշակերտութեան թիւը կ'ըլլայ շուրջ 5-6000, ենթակայ կ'ըլլան պետական քննութեան եւ հսկողութեան: Ուսման ծրագիր-կանոնագիրը, ինչպէս նաեւ դասագրքերը, ուսուցիչներու պաշտօնի կոչման եւ պաշտօնէ հեռացման որոշումները կը քննուին ու կը վաւերացուն կրթական գործավարութեան կողմէ: Նոյնպէս քննութեան ու վաւերացման ենթակայ կ'ըլլան վարժարաններու պիտճէները: Վարժարաններու մէջ թրքերէն լեզուի, պատմութեան, աշխարհագրութեան, հայրենագիտութեան եւ ընկերային գիտութիւններու դասերը կ'աւանդուին թրքերէն լեզուով, կրթական գործավարութեան կողմէ նշանակուած թուրք ուսուցիչներու կողմէ: Կրթական տնօրէնութեան կողմէ Փոխ Տնօրէններու նշանակումը՝ որը կը պատճառաբանուի օգնել տնօրէնին կրթական տնօրէնութեան հետ պաշտօնական յարաբերութեանց մէջ, սակայն կարելի է ըսել, թէ իրականին կ'ըլլայ աւելի հսկող եւ ճնշիչ քան՝ օգտակար:

Արձանագրութիւնները կը բռնուին նոյնպէս թրքերէնով: Լիսէի շրջանաւարտները պետական ծրագրին համաձայն, աւարտականի քննութիւններ յանձնելէ յետոյ միայն կ'ընդունուին համալսարան:

Կրթական տնօրէնութիւնը վարժարաններու տնօրէնութեանց ուղղած վիճակագրական հարցարաններով կը տիրանայ ազգային, համայնքային եւ ընտանեկան կարեւորագոյն տուեալներուն, որով կը հետապնդէ ազգային հաստատութիւնները ինքնորոշութենէ եւ ազատ գործելու հնարաւորութենէ զրկելու քաղաքականութիւն:

30-ական թուականներու աշխարհատարած տնտեսական տագնապը՝ որու ազդեցութիւնը հետգիտէտ աւելի զգալի կ'ըլլայ համայնքային կեանքէն ներս, պատճառ կ'ըլլայ ազգային հաստատութիւններու հասոյթներու նուազման: Նման բոլոր միւս ազգային հաստատութիւններու, կրթական հաստատութիւններու ելմտական կացութիւնն ալ կը խանգարուի եւ կ'ունենան պիտճէի յարաճուն բաց:

Կրթական գործավարութեան կողմէ նշանակուած թուրք ուսուցիչներու բարձր թոշակներու վճարումն ալ աւելի կը ծանրացնէ վարժարաններու բեռը, որոնցմէ շատեր կրնան պահել հազիւ 2-3 դասարաններ, իսկ ոմանք նոյնիսկ չեն յաջողիր պահել այդքանը:

Հանրապետական 20-30ական թուականներուն Պոլսահայ կրթական հաստատութիւններուն ապրած տագնապի ծանր հետեւանքն է, որ այսօր Պոլսահայ համայնքը կապրի՝ մայրենի լեզուի գործածութեան ինչպէս նաեւ ազգային վարժարաններու աշակերտական թիւի յարաճուն նուազման ձեւով, մտահոգութիւն պատճառելով համայնքի ապագային նկատմամբ:

**ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ЖИЗНЬ СТАМБУЛЬСКОЙ
АРМЯНСКОЙ КОЛОНИИ В ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКЕ 20-30-Х ГОДОВ
(В ОЦЕНКЕ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ)**

АРМАВЕНИ МИРОГЛУ (Турция, г. Стамбул)

Резюме

В статье обсуждаются вопросы, касающиеся сферы образования в стамбульской армянской колонии в 1920-30-ые годы, рассматривавшиеся на страницах периодической печати.

Статистические данные проливают свет на деятельность стамбульских национальных просветительских учреждений (в том числе их учащихся и преподавателей), а также национальных органов стамбульской армянской колонии. Представлены также практические действия турецкого правительства касательно централизации и строгого контроля просветительских учреждений национальных меньшинств Турции.